



**ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**«ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում» 2019 թվականի ծրագրի շրջանակներում «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի կողմից 2019 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամսվա ընթացքում իրականացված աշխատանքների վերաբերյալ**

**ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**«Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի և ՀՀ էկոնոմիկայի նախարարության միջև 05.09.2019թ. կնքված N 114-19 պայմանագրի շրջանակներում «ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում» 2019 թվականի ծրագրի իրականացման նպատակով «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի կողմից 2019 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում իրականացված աշխատանքների**

Աջակցության ուղղություն	Ծրագրի ամփոփ նկարագրությունը	Կատարված աշխատանքների նկարագրությունը	Փաստացի աջակցության արդյունքային ցուցանիշները
<p>ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար ուսուցողական աջակցություն (կարողությունների զարգացում)</p>	<p>2019 թվականի ընթացքում ՀՀ մարզերում կիրականացվեն սկսնակ գործարարների համար ձեռնարկատիրական հմտությունների զարգացման «Հաջող սկիզբ» ծրագրեր, որոնք հնարավորություն կտան սկսնակ գործարարներին ստանալու բիզնեսի պլանավորման, շուկայավարման, կառավարման, արտադրության և ֆինանսների պլանավորման գիտելիքներ և համապատասխան գործարար հմտություններ, ինչպես նաև հնարավորություն՝ ստանալու ֆինանսական աջակցություն: Ծրագիրը կիրականացվի՝ օգտագործելով գերմանական ձեռնարկատիրական հմտությունների զարգացման 2 լավագույն մեթոդաբանությամբ:</p> <p>Գիտելիքահեն տնտեսության կառուցում՝ ձեռնարկությունների ձևավորման ճանապարհով (Competency Based Economies through Formation of Enterprises - CEFE)</p> <p>Միկրոձեռնարկատիրության մոդելավորման նմանակում (Micro Entrepreneurial Simulation Training - MEST):</p>	<p>Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» 12 ծրագիր ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ, Արարատի մարզի Վեդի, Գեղարքունիկի մարզի Շամբարակ, Լոռու մարզի Ալավերդի, Կոտայքի մարզի Չարենցավան, Շիրակի մարզի Գյումրի (2 ծրագիր), Վայոց Ձորի մարզի Վայք, Տավուշի մարզի Իջևան և Նոյեմբերյան քաղաքներում, ինչպես նաև Երևան քաղաքում (2 ծրագիր) CEFE և MEST մեթոդաբանությամբ:</p> <p>Ընդհանուր առմամբ, նշված ծրագրերի մասնակցել են 167 սկսնակ գործարարներ, որոնցից 94-ը մշակել են գործարար ծրագրեր, և 76-ը ներկայացվել են ֆինանսական աջակցության:</p>	<p>Սկսնակ գործարարների համար կազմակերպված դասընթացներին մասնակցել են <b>167 սկսնակ գործարարներ</b></p>

<p>ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն</p>	<ul style="list-style-type: none"> <li>ՓՄՁ սուբյեկտների առավել լայն շրջանակների համար գործարար տեղեկատվության և խորհրդատվության հասանելիության և մատչելիության ապահովման նպատակով ՀՀ բոլոր մարզերում խմբային և անհատական հանդիպումներ կկազմակերպվեն ՓՄՁ սուբյեկտների ներկայացուցիչների (գործարարների) հետ: Հանդիպումների ընթացքում գործարարներին կներկայացվեն ՀՀ օրենսդրական դաշտում տեղի ունեցած ու նախատեսվող փոփոխությունները և կտրվեն պարզաբանումներ.</li> <li>Ծրագրի շրջանակներում գործարարների համար կմշակվի և կգործարկվի գիտելիքային առցանց հարթակ, որի հիմնական գաղափարը կայանում է նրանում, որ այն տեղեկատվության/խորհրդատվության և գիտելիքի առցանց աղբյուր կհանդիսանա ձեռնարկությունների կենսագործունեության տարբեր փուլերում՝ պլանավորման, մեկնարկի, կառավարման և ընդլայման: Հարթակը կպարունակի նաև մի շարք առցանց գործիքներ ինչպիսիք են ձեռնարկության մեկնարկային ծախսերի հաշվիչը, միջոցառումների օրացույցը, Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի համապատասխան մասնագետի հետ անմիջապես առցանց կապնվելու հնարավորությունը, ինչպես նաև օգտատերերի միջև ուղղակի հաղորդակցման գործիք՝ ստեղծելով ձեռնարկությունների միջև համագործակցության բազմաֆունկցիոնալ միջավայր:</li> <li>Գիտելիքային հարթակը կհամալրվի նաև գործարար ծրագրերի մշակման առցանց</li> </ul>	<p>Տեղեկատվական և խորհրդատվական աջակցության ծրագրերի շրջանակներում իրավաօրենսդրական ակտերի և դրանցում տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ ՓՄՁ սուբյեկտներին իրազեկման, մաքսային ձևակերպումների հաշվետվությունների ներկայացման և այլ ուղղություններով շուրջ 1200 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների տրամադրվել է 2829 անգամ աջակցություն:</p> <p>ՀՀ Արագածոտնի, Լոռու, Կոտայքի, Տավուշի, Լոռու, Շիրակի և Վայոց Ձորի մարզերում Գործարարության աջակցության գրասենյակի հետ համատեղ իրականացվել են ՀՀ հարկային օրենսդրության վերջին փոփոխությունների վերաբերյալ իրազեկման միջոցառումներ, որոնց մասնակցել են շուրջ 180 ՓՄՁ սուբյեկտի ներկայացուցիչներ:</p> <p>Ս.թ. սեպտեմբերի 30-ին գործարկվել է Ներդրումների աջակցման կենտրոնի /Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի/ նոր կայքէջը, որը կծառայի որպես գիտելիքային հարթակ և կհանդիսանա տեղեկատվության, խորհրդատվության և գիտելիքի առցանց աղբյուր ձեռնարկությունների կենսագործունեության տարբեր փուլերում՝ պլանավորման, մեկնարկի, կառավարման և ընդլայման: Այս ամենը նկարագրված է հարթակի "Քո բիզնեսը" հատվածում: Հարթակի "Ուսուցման կենտրոն" հատվածում գործարարները կարող են գտնել ձեռնարկատիրությանն առնչվող ուսուցողական տեսանյութեր և բիզնես ձեռնարկ/ուղեցույցներ: "Բիզնես մոդելներ" հատվածում գործարարները կարող են գտնել ոլորտային բիզնես ուղեցույցներ, որոնք հնարավորություն կտան նրանց պատկերացում կազմել տվյալ ոլորտում արտադրություն/ծառայություններ</p>	<ul style="list-style-type: none"> <li>Սկսնակ գործարարների և ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվել է <b>2829 բանավոր խորհրդատվություն</b></li> <li><b>Գործարկվել է</b> Գիտելիքային հարթակը</li> <li>Նկարահանվել է <b>1 տեսանյութ</b>, որտեղ նկարագրված են գիտելիքային հարթակի և ՓՄՁ պետական աջակցության ծրագրերի ընձեռած հնրավորությունները:</li> </ul>
---	--	---	--

	<p>գործիքով, որը համապատասխան հրանանգներով, բացատրական նյութերով և ներդրված բանաձևերով կուղորդի օգտվողին լիարժեք, հիմնավորված և համապարփակ գործարար ծրագիր ստեղծելու գործում:</p> <ul style="list-style-type: none"> <li>Կնկարահանվեն թեմատիկ ուսուցողական և պարզաբանող բնույթի 6-8 տեսանյութեր, որոնք պարզ և հանրամատչելի ձևով դիտողներին կպարզաբանեն մի շարք օգտակար թեմաներ՝ ինչպես գրանցել բիզնեսը, սննդի վերամշակման ոլորտում արտահանման ընթացակարգերը և պահանջները, օրենսդրությամբ միկրոձեռնարկություններին ընձեռվող արտոնությունները, ՓՄՁ պետական աջակցության ծրագրերի ընձեռած հնրավորությունները, ֆինանսական աջակցություն ստանալու եղանակները և այլն:</li> </ul>	<p>իրականացնելու հիմնական քայլերի, հիմնադրման և գործարկման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների կարիքի, շուկա մուտքի, դիրքավորման և գնային քաղաքականության վերաբերյալ: Կայքում ներկայացված "Աջակցության ծրագրեր" հատվածում գործարարները կձանոթանան ՓՄՁ պետական աջակցության ծրագրերի ընձեռած հնարավորություններին: Գիտելիքային հարթակի հնարավորություններին գործարարները կարող են ձանոթանալ <a href="http://www.ifc.am">www.ifc.am</a> /<a href="http://www.smednc.am/">www.smednc.am/</a> կայքի միջոցով: Այժմ աշխատանքներ են իրականացվում հարթակը գործարար ծրագրերի մշակման առցանց գործիքով համալրելու ուղղությամբ:</p> <p>ԵՄ կողմից իրականացվող «Աջակցություն ՓՄՁ զարգացմանը Հայաստանում» ծրագրի աջակցությամբ նկարահանվել են 4 ուսուցողական-տեղեկատվական տեսանյութեր ԵՄ և ԵԱՏՄ անդամ երկրներ արտահանման ընթացակարգերի, գործարար ծրագրերի առցանց գործիքից օգտվելու, ինչպես նաև սկսնակ գործարարներին մատչելի ֆինանսական աջակցության վերաբերյալ, ինչպես նաև տեսանյութ, որտեղ մանրամասն նկարագրված են գիտելիքային հարթակի և ՓՄՁ պետական աջակցության ծրագրերի ընձեռած հնրավորությունները: Տեսանյութերը առցանց հասանելի են Ներդրումների աջակցման կենտրոնի /Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի/ կայքէջում:</p>	
<p>ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն</p>	<p>ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն ծրագրի նպատակն է աջակցություն ցուցաբերել ՓՄՁ սուբյեկտների ֆինանսավորման (վարկավորման) հետ կապված հիմնախնդիրների հաղթահարմանը և այլ:</p>	<p>Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից ֆինանսական աջակցության ծրագրերի շրջանակներում 42 սկսնակ գործարարների տրամադրվել է 180,489,009 ՀՀ դրամի վարկային երաշխավորություն:</p>	<p><b>42 սկսնակ գործարարների</b> տրամադրվել է վարկային երաշխավորություն:</p>

	<p>ուղղությամբ նրանց համար ֆինանսական (վարկային) ռեսուրսների մատչելիության ապահովմանը:</p> <p>Ծրագիրը նպատակաուղղված է ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման միջոցով գրավադրման խնդրի հաղթահարմանը, ՀՀ մարզերում, հատկապես սահմանամերձ և հեռավոր բնակավայրերում ՓՄՁ սուբյեկտների վարկավորման հնարավորությունների ընդլայնմանը:</p>		
<p>Տեղական տնտեսական զարգացում</p>	<p>Տեղական տնտեսական զարգացման ծրագրային ուղղության շրջանակներում կիրականացվեն տարածաշրջանային և համայնքային տնտեսական զարգացման ծրագրեր, կստեղծվեն օրինակելի գործարար մոդելներ և կմշակվեն տեխնոլոգիական ձեռնարկ-ուղեցույցներ:</p> <p>ԵՄ տարածքային զարգացման պիլոտային դրամաշնորհային ծրագրի (Pilot Regional Development Programme (PRDP) – Armenia) ծրագրի շրջանակներում որպես տեղական տնտեսական զարգացման նախաձեռնություն 2019թ.-ին ՀՀ Լոռու մարզում կկառուցվի և կգործարկվի ճամփեզրյա կայան:</p>	<p>Հաշվետու ժամանակահատվածում ավարտվել են ՀՀ Լոռու մարզի ճամփեզրյա կայանի և կահավորման աշխատանքները:</p> <p>Ներկայումս ընթացքի մեջ են կայանի ՀՀ Լոռու մարզում հիմնադրվող ճամփեզրյա կայանի գործառույթների իրականացման համար գործընկեր կազմակերպության ընտրության աշխատանքները:</p> <p>Հաշվետու ժամանակահատվածում Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հետ համատեղ մշակվել է ապրանքների ներմուծման ընթացակարգերի վերաբերյալ գործարար ուղեցույց: Այժմ ընթանում են ուղեցույցի ձևավորման աշխատանքները, որի ավարտից հետո այն կտեղադրվի կայքէջում:</p>	<p>Մշակվել է ապրանքների ներմուծման ընթացակարգերի վերաբերյալ գործարար ուղեցույց:</p>
<p>ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովում</p>	<p>Աջակցության տվյալ ուղղության շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից կօգտագործվեն Հայաստանում ձեռնարկությունների եվրոպական ցանցի (այսուհետ՝ ՁԵՑ) գործարար համագործակցության կենտրոնի հնարավորությունները, ինչպես նաև կուժեղացվեն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի մասնագետների կարողությունները՝ ՓՄՁ սուբյեկտներին՝ համապատասխան հարցերին վերաբերող գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցության ցուցաբերման ուղղությամբ:</p>	<p>Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանում Ձեռնարկությունների եվրոպական ցանցի գործունեության շրջանակներում տրամադրվել է 207 աջակցություն՝ 112 ՓՄՁ-ների, այդ թվում՝ ՁԵՑ հիմնապաշարում տեղակայվել են ևս 25 ՓՄՁ սուբյեկտներ գործարար նկարագրեր՝ ապահովելով ընդհանուր առմամբ ՁԵՑ հիմնապաշարում 63 գործարար նկարագրերի առկայություն, համագործակցության համաձայնագրեր են կնքել 11 ընկերություններ, 16 ընկերություն մասնակցել են գործարար</p>	<p>• <b>25 ՓՄՁ սուբյեկտներ</b> գործարար նկարագրեր՝ ապահովելով ընդհանուր առմամբ ՁԵՑ հիմնապաշարում 63 գործարար նկարագրերի առկայություն,</p>

	<p>Բացի այդ, գործարարների համար կապահովվեն ձեռնարկատիրական փորձի փոխանակաման ծրագրերի մասնակցությունը:</p>	<p>համագործակցության հաստատման միջոցառման, 4 ընկերության տրամադրվել է նորարարության կառավարման գնահատման ծառայություն, 7 ընկերություն ստացել է բիզնեսի միջազգայնացմանն ուղղված խորհրդատվություն, ուղարկվել են 20 հետաքրքրության առաջարկներ, ստացվել են 50 հետաքրքրության առաջարկներ, 73 ընկերությունների ներկայացուցիչներ մասնակցել են իրազեկման միջոցառման:</p> <p>Էրասմուս երիտասարդ ձեռնարկատերերի համար ծրագրի շրջանակներում հաստատվել է դիզայնի, տուրիզմի, գինեգործության, մարքեթինգի, ագրոբիզնեսի և այլ ոլորտներում գործող 9 սկսնակ գործարարների փորձի փոխանակում, այդ թվում՝ 7 գործարարի փորձի փոխանակումը արտերկրում և 2 գործարարի փորձի փոխանակում՝ Հայաստանում:</p>	<ul style="list-style-type: none"> <li>• <b>11 գործարար</b> կնքել է համագործակցության համաձայնագիր,</li> <li>• <b>4 գործարար</b> բարելավել է նորարարական կառավարման հմտությունները:</li> <li>• Հաստատվել է <b>9 գործարարի</b> ձեռնարկատիրական փորձի փոխանակում:</li> </ul>
<p>Միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակում և իրականացում</p>	<p>Աշխատանքներ կիրականացվեն Հայաստանում ՓՄՁ զարգացմանն ուղղված համապատասխան ծրագրեր (միջոցառումներ) իրականացնող միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնման, մասնավորապես, ՓՄՁ զարգացման (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի, ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրերով նախատեսված միջոցառումների իրականացման ուղղությամբ:</p>	<p>Ս.թ. հոկտեմբեր ամսին «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմանդրամը COSME ծրագրի Հայաստանի անդամակցության շրջանակներում Իտալիայի, Իսպանիայի, Հունաստանի և Պորտուգալիայի գործընկեր կազմակերպությունների հետ կոնսրցիոնով մշակել և է Եվրահանձնաժողով է ներկայացրել ծրագրային առաջարկ՝ միջազգային համագործակցության և գիտելիքի փոխանակման միջոցով տուրիզմի ոլորտի ՓՄՁ-երի զարգացման ուղղությամբ: Նախագծով նախատեսվում է մասնակից երկրների տուրիզմի ոլորտում գործող շահառու ՓՄՁ-երի համար ապահովել կարողությունների զարգացման և միջազգային համագործակցության ապահովման մի շարք համալիր աջակցության միջոցառումներ:</p>	<p>Մշակվել և ներկայացվել է 2 <b>ծրագրային առաջարկ:</b></p>

		<p>«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամը ևս մեկ դրամաշնորհային ծրագրի (NUFFIC) է դիմել ICRA հուլանդական խորհրդատվական-դասընթացային կազմակերպության հետ կոնսորցիումով, որն իրականացվում է Հոլանդիայի կառավարության կողմից: Ծրագրի շրջանակներում իրականացվելու է դասընթացավարների վերապատրաստման դասընթաց «Ագրոբիզնեսի կարողությունների զարգացում» թեմայով, որից հետո նախատեսվում է մշակել թրեյնինգային մոդուլներ հենց ագրոբիզնեսի ներկայացուցիչների համար:</p> <p>Ծրագրի նախատեսում է՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• Ագրոբիզնեսում ներգրավված ՓՄՁ-ների հետ առնչվող կառույցների խորհրդատուների վերապատրաստման դասընթաց հետևյալ թեմաներով՝ <ul style="list-style-type: none"> <li>- Ագրոբիզնեսի կառավարում</li> <li>- Ագրոբիզնեսի մարկեթինգ</li> <li>- ԵՄ և այլ շուկաներ արտահանման ընթացակարգեր</li> <li>- Անհրաժեշտ սերթիֆիկատներ,</li> <li>- Ֆինանսական կառավարում և այլն:</li> </ul> </li> <li>• Դասընթացի ավարտին նախատեսվում է կազմակերպել դասընթացներ անմիջապես ագրոբիզնեսի ներկայացուցիչ ՓՄՁ-ների համար, որի արդյունքում շահառու կազմակերպությունների փորձագետները իրենց ստացած գիտելիքները կփոխանցեն ագրոբիզնեսի ներկայացուցիչ շահառուներին:</li> </ul>	
--	--	---	--

**«Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի և ՀՀ էկոնոմիկայի նախարարության միջև 05.09.2019թ. կնքված N 114-19 պայմանագրի շրջանակներում «ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում» 2019 թվականի ծրագրի իրականացման նպատակով «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի կողմից 2019 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում իրականացված աշխատանքների համար ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 91,749,751 ՀՀ դրամ:**